# ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# RA VAYOTS DZOR MARZ




| | |
|---|---|
| ***Մարզկենտրոնը՝*** | ***Marz centre*** |
| ք. Եղեգնաձոր | Eghegnadzor town |
| ***Տարածաշրջանները՝*** | ***Territories*** |
| Վայք, | Vayk, |
| Եղեգնաձոր | Eghegnadzor |
| ***Քաղաքները՝*** | ***Towns*** |
| Եղեգնաձոր, | Eghegnadzor, |
| Ջերմուկ, | Jermuk, |
| Վայք | Vayk |

***ՀՀ Վայոց ձորի մարզը*** գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավային հատվածում: Մարզը պետական սահմանով հարավում սահմանակից է Նախիջևանին, հյուսիսում՝ ՀՀ Գեղարքունիքի մարզին, արևելքում՝ ՀՀ Սյունիքի մարզին և արևմուտքում՝ ՀՀ Արարատի մարզին:

***RA Vayots Dzor marz*** is situated in Southern part of the Republic. In the South borders with Nakhijevan, in the North it borders with RA Gegharkunik marz, in the East – RA Syunik marz and in the West – RA Ararat marz.

| | |
|---|---|
| Տարածքը<br>Territory | 2308 քառ. կմ / sq.km |
| ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը<br>Territory share of the marz in the territory of RA | 7.8 % |
| Քաղաքային համայնքներ<br>Urban communities | 3 |
| Գյուղական համայնքներ<br>Rural communities | 41 |
| Քաղաքներ/Towns | 3 |
| Գյուղեր/Villages | 52 |
| Բնակչության թվաքանակը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ<br>Population number as of January 1, 2010 | 55.8 հազ. մարդ/ ths. persons |
| այդ թվում՝<br>including: | |
| քաղաքային<br>urban | 19.3 հազ. մարդ/ ths. persons |
| գյուղական<br>rural | 36.5 հազ. մարդ/ ths. persons |
| ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2009թ.<br>Share of marz population size in RA population size, 2009 | 1.7 % |
| Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը<br>Share of urban population size | 34.6 % |
| Գյուղատնտեսական նշանակության հողեր / Agricultural land | 209260 հա/ ha |
| այդ թվում՝ վարելահողեր<br>including: arable land | 16217 հա/ha |

*ՀՀ Վայոց ձորի մարզը* շրջապատված է բարձր լեռներով, ջրբաժան լեռնաշղթաներով, որոնք, յուրահատուկ բնական պատնեշներ հանդիսանալով նրա և հարևան տարածքների միջև, այն դարձնում են աշխարհագրական մի ամբողջություն:

*ՀՀ Վայոց ձորի մարզն* ունի կենդանական և բուսական բազմազան աշխարհ: Տարածքի 5.7%-ը կամ 13240.1 հա կազմում են բնական անտառները:

Արտակարգ խայտաբղետ է մարզի մակերևույթը: Հրաբխային ուժերը, երկրաշարժերը, Արփա գետի և դրա վտակների ջրերն առաջացրել են տարբեր ուղղություններով ձգվող բազմաթիվ լեռնաշղթաներ՝ մեծ ու փոքր գագաթներով, խորհրդավոր ձորեր, լեռնանցքներ, սարահարթեր, գոգավորություններ, դաշտեր, մարգագետիններ և բնական բազմապիսի կերտվածքներ, որի ամենավառ օրինակն է Ջերմուկի հիասքանչ ջրվեժը (60 մ):

*ՀՀ Վայոց ձորի* մարզի կլիման ընդհանուր առմամբ ցամաքային է՝ ցուրտ կամ չափավոր ցուրտ ձմեռներով և շոգ կամ տաք ամառներով: Օդի առավելագույն աստիճանը հարավային շրջաններում հասնում է + 41o C-ի, իսկ բացարձակ նվազագույնը՝ -35o C-ի: Տեղումները կազմում են տարեկան 300-ից 700 մմ:

2009թ.-ին ***մարզի տնտեսության հիմնական հատվածների*** տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 0.9 %,
- գյուղատնտեսություն՝ 2.2 %,
- շինարարություն՝ 0.9 %,
- մանրածախ առևտուր՝ 0.4 %,
- ծառայություններ՝ 0.4 %:

Մարզի ***տնտեսության*** ընդհանուր ծավալում գերակշռողը գյուղատնտեսությունն է: Գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են անասնաբուծությամբ, որի արտադրանքը կազմել է գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի 63%-ը: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև թռչնաբուծությունը, խաղողագործությունը, պտղաբուծությունը և բանջարաբուծությունը:

***Արդյունաբերության*** ոլորտում հիմնականում զարգացած են ոչ ոգելից ըմպելիքի՝ «Ջերմուկ» հանքային ջրերի և խաղողի գինու արտադրությունները, որոնց տեսակարար կշիռները 2009թ. հանրապետության հանքային ջրերի և խաղողի գինու արտադրությունների ընդհանուր ծավալում, համապատասխանաբար, կազմել են՝ 59.5% և 9.4%:

***Բեռնաուղևորափոխադրումները*** մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով: Մարզով է անցնում Հայաստանն Իրանի հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության հեռանկարային զարգացման գործում:

*Vayots dzor* is surrounded with high mountains, water-separately mountain ranges, that being original natural banks between its and neighbouring territories, turn that into a geographical single whole.

*Vayots dzor marz* has varied fauna and flora. Natural forests comprise 5.7% or 13240.1 ha of territory.

Voyots dzor surface is extraordinary variegated. Volcanic forces, earthquakes, waters of Arpa river and its tributaries raised numerous mountain ranges stretching by different directions with big and small tops, mysterious canyons, mountain passes, plateaus, concavities, fields, meadows and natural varied buildings, the most bright example of which is Jermuk wonderful waterfall (60 m).

The Vayots dzor climate on the whole is continental with cold or moderate cold winters and hot or warm summers. The highest possible air temperature reaches +41$^0$C in southern districts, and the exceptional minimum temperature reaches - 35$^0$ C. Precipitations comprise 300-700 mm.

In 2009 the share of ***economy main branches*** of RA Vayots Dzor marz in total volume of correspondent branches of the republic comprised

- industry 0.9 %,
- agriculture 2.2 %,
- construction 0.9 %,
- retail trade 0.4 %,
- services 0.4 %.

In total volume of marz ***economy*** the prevailing is agriculture. Peasant farms mainly deal with cattle-breading, the production of which comprised 63% of volume of gross agricultural product. The vine-growing, fruit-growing and vegetable-growing have certain share in the volume of gross agriculture produce.

The production of non-alcoholic beverages (in particular, Jermuk mineral water) is mainly developed in the ***industry*** field, the share of which in total volume of industrial production of the republic comprised 59.5% in 2009, and the grape wine – 9.4%.

***Freight and passenger transportations*** in the marz are implemented by road transport. The motor highway connecting Armenia with Iran goes through marz that plays an essential role in the perspective development of marz economy.

Մարզում ակնհայտ են ***ներքին և արտաքին զբոսաշրջության*** զարգացման մեծ հեռանկարները:

***Եղեգնաձոր*** քաղաքը (2009թ. տարեվերջին՝ 8.2 հազ. բնակիչ) համարվում է պատմական Սյունիքի հնագույն բնակավայրերից մեկը և գտնվում է Երևանից 123 կմ հեռավորության վրա:

***Եղեգնաձոր քաղաքի տնտեսության*** ընդհանուր ծավալում գերակշռող ոլորտներն են ***արդյունաբերությունն ու շինարարությունը:***

Արդյունաբերության ոլորտում հիմնականում զարգացած են ***խաղողի գինու, էլեկտրասարքավորանքի արտադրությունները,*** որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև ***պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունները:***

***Վայք քաղաքը*** (2009թ. տարեվերջին՝ 5.9 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 132 կմ, մարզկենտրոնից՝ 16 կմ հեռավորության վրա:

***Վայք քաղաքի*** տնտեսության հիմնական ճյուղն ***արդյունաբերությունն է:*** Հիմնականում զարգացած են ***հանքային ջրերի և ոչ ալկոհոլային խմիչքների, շինանյութերի, ձեռագործ գորգերի արտադրությունները:***

***Ջերմուկ քաղաքը*** (2009թ. տարեվերջին՝ 5.2 հազ. բնակիչ) գտնվում է 2070 մ բարձրությամբ լավային սարավանդի վրա (հեռավորությունը Երևանից՝ 175 կմ, մարզկենտրոնից՝ 53 կմ): Ջերմուկը լայն ճանաչում ունի որպես առողջարանային քաղաք: Ճանաչված առողջարաններից են «Ջերմուկ»-ը, «Նոր կյանք»-ը, «Գլաձոր»-ը, «Աղաջանյանի անվան առողջարան»-ը և «Արարատ»-ը:

***Քաղաքի*** անվանումը կապված է հանքային տաք աղբյուրների՝ ջերմուկների հետ:

***Ջերմուկ քաղաքի*** տնտեսության առաջատար ճյուղը ոչ ոգելից ըմպելիքի, ***«Ջերմուկ» հանքային ջրի,*** արտադրությունն է, որի տեսակարար կշիռը 2009թ. մարզի հանքային ջրերի արտադրության ընդհանուր ծավալում կազմել է 95.2%:

There is a great perspective, for ***internal and external tourism*** development in the marz.

***Eghegnadzor town*** (8.2 ths. inhabitants in 2009) is considered the one of Syunik ancient settlements and is situated in 123 km distance from Yerevan.

The main branches of economy of ***Eghegnadzor town*** are ***industry and construction***.

The most developed branches in industry are ***grape wine***, manufacture of ***electrical equipments***, manufacture of ***fabricated metal products has some particular role in industry*** of the marz too.

***Vayk town*** (5.9 ths. inhabitants in the end of the year 2009) is situated in 132 km distance from Yerevan and 16 km distance from marz centre.

The main branch of economy of ***Vayk town*** is industry. Especially production of ***mineral water, alcohol-free beverages, building materials and carpet making industry are developed.***

***Jermuk town*** (5.2 ths. persons in 2009) is situated on the lava plateau with the height 2070 m (distance from Yerevan is 175 km, from marz centre – 53 km). Jermuk is widely recognised as a sanatorium town. The recognised sanatoriums are “Jermuk”, “Nor kyanq”, “Gladzor”, “sanatorium named after Aghajanyan” and “Ararat”.

***The town*** name is related to mineral warm sources, jermuks.

The main branch of economy of ***Jermuk town*** is the production of non alcoholic beverages, ***“Jermuk” mineral water***, the share of which comprised 95.2% in total volume o9f mineral water production of the marz in 2009.

## ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ
## RETAIL TRADE UNITS

| | Քանակը Number | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 | |
| Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը | 134 | 219 | 220 | 234 | 210 | Retail trade units, total |
| այդ թվում՝ | | | | | | *including* |
| խանութներ | 44 | 129 | 130 | 145 | 120 | shops |
| կրպակներ | 59 | 59 | 59 | 59 | 59 | kiosks |
| գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ | 1 | 1 | 1 | 1 | 1 | markets of agricultural produce |
| սպառողական ապրանքների շուկաներ | 1 | 1 | 1 | 1 | 1 | markets of consumer goods |
| առևտրի այլ օբյեկտներ | 29 | 29 | 29 | 28 | 29 | other trade units |

## ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
## EDUCATION ESTABLISHMENTS

| | Քանակը Number | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 | |
| Հաստատություններ, ընդամենը | 79 | 79 | 79 | 80 | 81 | Establishments, total |
| *այդ թվում`* | | | | | | *including* |
| նախադպրոցական պետական | 17 | 17 | 17 | 17 | 17 | pre-school establishment |
| հանրակրթական պետական դպրոցներ | 51 | 51 | 51 | 50 | 51 | state general education school |
| հանրակրթական ոչ պետական դպրոցներ | - | - | - | 1 | 1 | non-state general education school |
| երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ | 7 | 7 | 7 | 7 | 7 | music and art school youth creative (cultural) centre |
| պետական միջին մասնագիտական ուսումնական | 1 | 1 | 1 | 1 | 1 | state secondary specialized education establishment |
| ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական | 2 | 2 | 2 | 2 | 2 | non-state secondary specialized education establishment |
| պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղ | - | - | - | 1 | 1 | branch of state higher education establishment |
| ոչ պետական բարձրագույն ուսումնական | 1 | 1 | 1 | 1 | 1 | non-state higher education establishment |

## ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ
## URBAN COMMUNITIES

| Համայնքի անվանումը | Community name | Բնակավայրի անվանումը | Settlement name | Մշտական բնակչության թվաքանակը Population de jure number as of | |
|---|---|---|---|---|---|
| | | | | 2009թ. հունվարի 1-ի դրությամբ*, մարդ January 1*, 2009, people | 2010թ. հունվարի 1-ի դրությամբ*, մարդ January 1*, 2010, people |
| Եղեգնաձոր | Eghegnadzor | ք. Եղեգնաձոր | t. Eghegnadzor | 8177 | 8184 |
| Վայք | Vayk | ք. Վայք | t. Vayk | 5899 | 5912 |
| Ջերմուկ | Jermuk | ք. Ջերմուկ | t. Jermuk | 6212 | 6226 |
| | | ք. Կեչուտ | v. Kechut | | |

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ
## RURAL COMMUNITIES

| | Համայնքի անվանումը | Community name | Բնակավայրի անվանումը Settlement name | Մշտական բնակչության թվաքանակը[**] Population de jure number[**] as of | |
|---|---|---|---|---|---|
| | | | | 2009թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ January 1, 2009, people | 2010թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ January 1, 2010, people |
| 1 | Ագարակաձոր | Agarakadzor | | 1431 | 1357 |
| 2 | Ազատեկ | Azatek | | 543 | 564 |
| 3 | Աղավնաձոր | Aghavnadzor | | 2066✧ | 2060 |
| 4 | Աղնջաձոր | Aghnjadzor | | 480 | 471 |
| 5 | Արենի | Areni | •Արենի/Areni<br>•Ամաղու/Amaghu | 1847 | 1892 |
| 6 | Արին | Arin | | 252 | 266 |
| 7 | Արտաբույնք | Artabuynk | | 1155 | 1146 |
| 8 | Արտավան | Artavan | | 292 | 313 |
| 9 | Արփի | Arpi | | 1224 | 1227 |
| 10 | Բարձրունի | Bardzruni | | 355 | 401 |
| 11 | Գետափ | Getap | | 2363 | 2377 |
| 12 | Գլաձոր | Gladzor | | 2682 | 2706 |
| 13 | Գնդեվազ | Gndevaz | | 1007 | 1007 |
| 14 | Գնիշիկ | Gnishik | •Գնիշիկ / Gnishik<br>• Մոզրով /Mozrov | 218 | 212 |
| 15 | Գողթանիկ | Goghtanik | | 220 | 214 |
| 16 | Գոմք | Gomk | •Գոմք/ Gomk<br>•Ախտա/Akhta<br>•Կապույտ /Kapuyt | 233 | 280 |
| 17 | Ելփին | Elpin | | 1383 | 1305 |
| 18 | Եղեգիս | Eghegis | | 512 | 511 |
| 19 | Զառիթափ | Zaritap | •Զառիթափ/ Zaritap,<br>•Հորադիս / Horadis | 1541 | 1543 |
| 20 | Զեդեա | Zedea | | 220 | 219 |
| 21 | Թառաթումբ | Taratumb | | 636 | 583 |
| 22 | Խաչիկ | Khachik | | 1030 | 1028 |
| 23 | Խնձորուտ | Khndzorut | | 499 | 525 |
| 24 | Կարմրաշեն | Karmrashen | | 285 | 289 |
| 25 | Հերհեր | Herher | | 1009 | 1004 |
| 26 | Հերմոն | Hermon | • Հերմոն/ Hermon<br>•Արատես/Arates<br>•Կալասար/ Kalasar | 186✧ | 188 |
| 27 | Հորբատեղ | Horbategh | | 265 | 265 |
| 28 | Հորս | Hors | | 318 | 307 |
| 29 | Մալիշկա | Malishka | | 5303 | 5316 |
| 30 | Մարտիրոս | Martiros | | 681 | 663 |
| 31 | Նոր Ազնաբերդ | Nor Aznaberd | | 140 | 166 |
| 32 | Շատին | Shatin | | 2035 | 2041 |
| 33 | Չիվա | Chiva | | 1027 | 1027 |
| 34 | Ռինդ | Rind | | 1518 | 1535 |
| 35 | Սալլի | Salli | | 251 | 252 |

| | Համայնքի անվանումը | Community name | Բնակավայրի անվանումը<br>Settlement name | Մշտական բնակչության թվաքանակը**<br>Population de jure number** as of | |
|---|---|---|---|---|---|
| | | | | 2009թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ<br>January 1, 2009, people | 2010թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ<br>January 1, 2010, people |
| 36 | Սարավան | Saravan | •Սարավան /Saravan,<br>•Ուղեձոր /Ughedzor | 231 | 272 |
| 37 | Սերս | Sers | | 233 | 222 |
| 38 | Վարդահովիտ | Vardahovit | •Վարդահովիտ/ Vardahovit,<br>•Գետիկվանք/ Getikvanq,<br>•Սևաժայռ/Sevajayr | 235 | 236 |
| 39 | Վերնաշեն | Vernashen | | 1319 | 1314 |
| 40 | Փոռ | Por | | 144 | 143 |
| 41 | Քարագլուխ | Qaraglukh | | 908 | 875 |

## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2009թ.
## SOME SOCIAL INDICATORS OF DISTRICT COMMUNITY WITH 10 000 POPULATION IN RA VAYOTS DZOR MARZ, 2009

| | Ընդա-մենը Total | *նրանցից/including:* | | |
|---|---|---|---|---|
| | | կանայք[1] women[1] | տղամարդիկ[1] men[1] | |
| Բնակչություն, մարդ | 10000 | 5011 | 4989 | Population, person |
| Ծնվածներ, մարդ | 125 | 62 | 63 | Births, person |
| Մահացածներ, մարդ | 89 | 45 | 44 | Deaths, person |
| Ամուսնություններ | 60 | X | X | Marriages |
| Ամուսնալուծություններ | 8 | X | X | Divorces |
| Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ | 39.0 | X | X | Total area of housing stock provided per inhabitant, square metre |
| Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝ | | | | Education sphere, attendance to education establishments, person |
| նախադպրոցական | 126 | 63 | 63 | pre-school |
| հանրակրթական | 1357 | 644 | 713 | schools of general education |
| երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան-ստեղծագործական կենտրոններ | 143 | 98 | 45 | musical, art schools, creative centers for children |
| նախնական մասնագիտական (արհեստագործական) | 8 | 1 | 7 | primary vocational |
| միջին մասնագիտական | 62 | 42 | 20 | secondary |
| բարձրագույն մասնագիտական | 86 | 63 | 23 | higher |
| Առողջապահության ոլորտ՝ | | | | Public health sphere |
| հաճախել են պոլիկնինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը) | 31601 | … | … | annual attendance to polyclinic during the year (number of attendances) |
| Մարզիկներ, մարդ | 426 | 75 | 351 | Athletes, person |
| Զբաղվածներ, մարդ | 4519 | … | … | Employed, person |
| նրանցից՝ գիտական հիմնարկներում | - | - | - | of which - in Science establishments |
| նրանցից՝ գիտության դոկտոր | - | - | - | of which - doctors of Science |
| գիտության թեկնածուներ | - | - | - | candidates of Science |
| ուսուցիչներ | 190 | 143 | 47 | teachers |
| բժիշկներ | 20 | … | … | physicians |
| միջին բուժանձնակազմ | 53 | … | … | paramedical personnel |
| Գործազուրկներ /պաշտոնապես գրանցված/, մարդ | 198 | 150 | 48 | Unemployed /officially registered/ person |
| Սոցիալական ապահովության ոլորտ | | | | Social insurance sphere |
| ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ | 1857 | … | … | total pensioners/ as of the end of the year/ person |
| աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ | 452 | X | X | families that get poverty family benefit and one-time benefit |
| Հաճախումների քանակը տարվա ընթացքում | | | | Annual attendance during the year |
| գրադարան | 36614 | … | … | library |
| թատրոն | - | - | - | theatre |
| համերգ | - | - | - | concert |
| թանգարան | 162 | … | … | museum |
| Իրավական ոլորտ | | | | Law sphere |
| հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում | 36 | X | X | total crimes, during the year |
| այդ թվում՝ ոչ մեծ ծանրության | 19 | X | X | of which - not grave crime |
| միջին ծանրության | 10 | X | X | medium crime |
| ծանր | 6 | X | X | grave crime |
| առանձնապես ծանր | 0.0 | X | X | special grave crime |

[1] *Ցուցանիշները հաշվարկային են:*
*The indicators are accountable.*